ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 47

«12» 05 2021թ. գ. Երևան

2021Թ. ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԹԵԺ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՀԱԶԱՆԳԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ, ԸՍՏ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2021թ. հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական հանցագործությունների վերաբերյալ մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցների հրապարակումները, քաղաքացիների հաղորդումների և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերը (այսուհետ՝ հաղորդումներ) գրանցելու, հաշվառելու, ուսումնասիրելու, ըստ ենթակայության ուղարկելու, այդ հաղորդումների քննարկման և դրանց հիման վրա նախապատրաստվող նյութերի ու հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությունը համակարգելու նպատակով ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. 2021թ. հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների գրանցումը,

հաշվառումը, ուսումնասիրությունը, ըստ ենթակայության ուղարկումն ապահովելու, ինչպես նաև այդ հաղորդումների քննարկման, դրանց հիման վրա նախապատրաստվող նյութերի ու հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ)՝ հետևյալ կազմով՝

Աշխատանքային խմբի ղեկավար՝ Արթուր Դավթյան (ՀՀ գլխավոր դատախազ), աշխատանքային խմբի անդամներ՝ Վահե Հարությունյան, Հայկ Ասլանյան, Գևորգ Բաղդասարյան, Արմեն Աֆանդյան (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ), Սևակ Հովհաննիսյան (Երևան քաղաքի դատախազ), Տիգրան Ամբարյան (ՀՀ զինվորական դատախազի տեղակալ), Արսեն Մարտիրոսյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ), Վաղինակ Ջանազյան (ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ), Արտակ Հարությունյան (ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ), Արթուր Չախոյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ), Լևոն Չարխիֆալակյան (ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ), Աշոտ Ժամկոչյան, Կարեն Կարապետյան (ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներ), Ազատ Մարգարյան (ՀՀ գլխավոր դատախազության դատախազ), Վահագն Պողոսյան, Վաղինակ Մկրտչյան (Երևան քաղաքի դատախազի տեղակալներ), Շուշանիկ Իսրայելյան (ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ), Հայկանուշ Բաղդասարյան, Արսեն Մարգարյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալներ), Էդգար Արսենյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ), Մամիկոն Մարտիրոսյան (ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ), Գուրգեն Սաֆարյան, Արմեն Մուրադյան, Կորյուն Սերոբյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազներ), Վարդգես Սարգսյան (ՀՀ գլխավոր դատախազության հասարակակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ), Նարեկ Խաչատրյան (ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ), Գևորգ Թովմասյան (ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական), Գոռ Աբրահամյան (ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական), Արևիկ Խաչատրյան (ՀՀ դատախազության հանրային կապերի բաժնի պետ), Աիդա Շահբազյան (ՀՀ դատախազության արարողակարգի վարչության պետի տեղակալ՝ աշխատանքային խմբի քարտուղար), Սուսաննա Անդրեասյան (ՀՀ գլխավոր

դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժնի պետ՝ աշխատանքային խմբի քարտուղար), Նունե Խաչատրյան (ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժնի ավագ մասնագետ):

2. Աշխատանքային խմբին՝

1) Ուսումնասիրել 2021թ. հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում, ինչպիսի ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները, լուծել դրանց ենթակայության հարցը.

2) Գործնական աջակցություն ցուցաբերել ՀՀ գլխավոր և զինվորական կենտրոնական դատախազությունների կառուցվածքային ստորաբաժանումներին, ՀՀ գլխավոր և զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների դատախազներին ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման, նյութերի նախապատրաստման և հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս,

3) Զեկուցման ներկայացված տեղեկությունները, անհրաժեշտության դեպքում, շրջաբերական նամակների տեսքով ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների դատախազներին:

4) Ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման, նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի ամփոփման արդյունքներով պատրաստել և սահմանված կարգով աշխատանքային խմբի ղեկավարին ներկայացնել համապատասխան տեղեկանքներ,

5) Ապահովել կատարված աշխատանքների հրապարակայնությունը,

6) Սերտ համագործակցություն ապահովել իրավապահ մյուս մարմինների, դիտորդական առաքելություն իրականացնող և շահագրգիռ այլ կազմակերպությունների ու անձանց հետ:

3. Աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազներին՝

Յուրաքանչյուր շաբաթվա առաջին օրը՝ մինչև ժամը 18^{00}-ն, ամփոփ տեղեկանք ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Աֆանդյանին՝ ընտրական հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումների, դրանց գրանցման, հաշվառման, ընթացք տալու վիճակի և արդյունքների մասին:

4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Աֆանդյանին՝

Յուրաքանչյուր շաբաթվա երկրորդ օրը՝ մինչև ժամը 11^{00}-ն, ամփոփ տեղեկանք ներկայացնել աշխատանքային խմբի ղեկավարին՝ ընտրական հանցագործությունների

վերաբերյալ ստացված հաղորդումների, դրանց գրանցման, հաշվառման, ընթացք տալու վիճակի և արդյունքների մասին:

5. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների դատախազներին՝

1) Ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները քննարկել և դրանց ընթացք տալ հնարավորին սեղմ ժամկետում,

2) Ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման, նյութերի նախապատրաստման և քրեական գործերի հարուցման, դրանց ընթացքի մասին հաղորդումներ ուղարկել աշխատանքային խմբին,

3) Անհրաժեշտության դեպքում, նույնաբնույթ ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման, դրանց հիման վրա նյութերի նախապատրաստման և հարուցված քրեական գործերի նախաքննության, ինչպես նաև բարդ ու տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող հարցադրումներով միասնական պրակտիկա ապահովելու նկատառումով, խորհրդակցել խմբի ղեկավարի հետ, կազմակերպել քննարկումներ:

6. Հայաստանի Հանրապետության դատախազության հանրային կապերի բաժնին՝

1) Համացանցի ամենօրյա ամբողջական մոնիտորինգի արդյունքներով իրականացնել ընտրական հանցագործությունների վերաբերյալ հրապարակումների, հաղորդումների էլեկտրոնային գրանցումը և հաշվառումը, արդյունքները՝ ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակով, պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության ներկայացնել աշխատանքային խմբին,

2) Կազմակերպել ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման և կայացված որոշումների օպերատիվ լուսաբանումը՝ ապահովելով դրանց հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

7. Աշխատանքային խմբի քարտուղարներին՝

Աշխատանքային խմբի ղեկավարի անմիջական ղեկավարությամբ ընտրախախտումների վերաբերյալ գրագրություններով վարել առանձին գործավարություն:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

9. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի

խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ